ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբաց համայնք, ՀՀ
Շիրակի մարզ, գ. Այգաբաց, 11 փող. 5 շենք, Հեռ. (094) 81 49 67 ,
aygabats.shirak@mta.gov.am

N 34
29 նոյեմբեր 2016թ.

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀՈՎՍԵՓ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սիմոնյան
Ձեզ ենք ուղարկում Շիրակի մարզի Այգաբացի համայնքի ավագանու 2016թվականի նոյեմբերի 24-ի թիվ 6 նիստի թիվ 25 և թիվ 26-Ն որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆԻԿ ՎԱՆԵՑՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբաց համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Այգաբաց, (094) 81 49 67, aygabats.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱԲԱՑԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթներով՝

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԹՈՒՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
3. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՈՎՍԵՓ
4. ՄՍՐՅԱՆ ԳՆԵԼ
5. ՌՈՍՏՈՄՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆԻԿ ՎԱՆԵՑՅԱՆ

24 նոյեմբերի 2016թվական
գ. Այգաբաց

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Այգաբացի համայնքի ավագանու
2016 թվականի նոյեմբերի
24-ի թիվ 25 որոշման

հ/հ	Անվանումը	Չափի միավորը	Քանակը	Գումարը	Վիճակը
1	Մշակույթի տուն	հատ	1		
2	Մանկապարտեզի շենք	հատ	1		քանդված
3	Բաղնիքի շենք	հատ	1		բնակելի
4	Բնակելի շենք	հատ	4		
5	Հուշարձան	հատ	1		
6	Ներքին ջրագծեր	կմ	4		
7	Ճանապարհներ	կմ	7-ասֆալտ 4-հողային		
8	Ներքին ոռոգման ցանց	կմ	15		
9	Գերեզմանոց	հատ	2		
10	Գերեզմանոց հին	հատ	1		
11	Եկեղեցի	հատ	1		
12	Կենցաղի տուն	հատ	1		
13	Ավտոմեքենա ՎԱԶ 21-06	հատ	1	2099,0	
1	Կարիչ	հատ	1	1500	
2	Հաշվիչ մեքենա	հատ	1	4000	
3	Գրասենյակային կոմպլեքս	հատ	1	4300	
4	Դակիչ	հատ	1	2000	
5	Ֆլեշ	հատ	1	7500	
6	Աթոռ օֆիսի	հատ	4	40000	
7	Սեղան օֆիսի	հատ	3	135000	
8	Սեղան օֆիսի	հատ	1	160000	
9	Սեղան օֆիսի	հատ	2	100000	
10	Պահարան օֆիսի	հատ	1	45000	
11	Պահարան օֆիսի	հատ	1	105000	
12	Պահարան օֆիսի	հատ	1	75000	
13	Համակարգչի սեղան	հատ	1	35000	
14	Բ ազկաթոռ օֆիսի	հատ	2	60000	
15	Բ ազկաթոռ օֆիսի	հատ	1	65000	
16	Հաշվիչ մեքենա	հատ	2	3600	
17	Կնիքի բարձիկ	հատ	1	500	
18	Էլ. ջեռուցիչ	հատ	1	20000	
19	Աղբարկղ	հատ	1	1000	
20	Վառարանի խողովակ	հատ	3	3000	
21	Վառարանի արմունկ	հատ	2	2000	
22	Մոնիտոր 15 LG 805	հատ	1	91000	
23	Տպիչ HP 1020	հատ	1	121000	
24	Ստեղնաշար	հատ	1	8000	
25	Մկնիկ	հատ	1	5000	
26	UPS	հատ	1	44000	

27	Հեռուստացույց	հատ	1	32000	
28	Համակարգիչ PV	հատ	1		
29	Մոնիտոր LCD E 900 WD	հատ	1		
30	Canon F 149200 N STE 27420	հատ	1		
31	Մկնիկ	հատ	1		
32	Ստեղնաշար	հատ	1		
33	Համակարգիչ ASUS/3RAM 4GB	հատ	1	230000	
34	Համակարգիչ P8 RAM 2GB	հատ	1	150000	
35	Մոնիտոր HP 20	հատ	1	70000	
36	Զայնապյուն	հատ	2	16000	
37	Մկնիկ	հատ	1	2000	
38	Ստեղնաշար	հատ	1	8000	
39	Անխափան սնուցման սարքեր	հատ	1	22000	
40	Ցանցային մալուխ	մ	15	3000	

Մշակույթի տուն

h/h	Անվանումը	Չափի միավորը	Քանակը	Գումարը	Վիճակը
1	Անհատական աթոռ	հատ	5		
2	Բանկետկա	հատ	1		
3	Ակարդիոն	հատ	1		
4	Լուսարձակ ՊՌ 05- 115	հատ	2		
5	Սոֆիտ ԿԱՋ - 4 Մ	հատ	5		
6	Գրապահարան	հատ	1		
7	Բեմի վարագույրի հավաքածու	հատ	4		
8	Բեմի ենթավարագույր	հատ	2		
9	Բեմի կիսավարագույր	հատ	5		
10	Կուլիսներ	հատ	8		
11	Բեմի նկար	հատ	1		
12	Բեմի նկար	հատ	1		
13	Ակումբային թիկնաթոռ	հատ	250		
14	Կինոցուցադրման հավաքածու	հատ	1		
15	Էկրան	հատ	1		
16	Ուղեգորգ	հատ	10		
17	գեղանկար	հատ	2		
18	Թենիսի սեղան	հատ	1		
19	ամբիոն	հատ	1		
20	Լուսամփոփ	հատ	100		

Գրադարան

h/h	Անվանումը	Չափի միավորը	Քանակը	Գումարը	Վիճակը
1	Գեղարվեստ և մանկական գրքեր	հատ	5096		
2	Մասն. և քաղաք. գրականություն	հատ	2378		
3	Բրոշյուր	հատ	1106		
4	ՀՀ հանրագիդարան	հատ	11		
5	Ինչ է,ով է	հատ	3		
6	Մանրանկարչություն	հատ	3		
7	Բառարաններ	հատ	27		
8	Ռուսական գրականություն	հատ	1710		
9	ՀՄՊ ալբոմ	հատ	2		
10	Երկաթյա գրադարակներ	հատ	51		
11	Դիմադիր սեղան	հատ	4		
12	Աթոռ	հատ	6		
13	Նկար <<Լենին>>	հատ	1		
14	Աստիճան	հատ	1		
15	Ժուռնալի սեղան	հատ	1		
16	Գրապահարան	հատ	5		
17	Ընթերցողական սեղան	հատ	3		
18	Ցուցափեղկ	հատ	1		
19	Քարտարան սեղանի	հատ	1		
20	Ցուցանակ	հատ	1		
21	Վարագույր կախիչի	հատ	8		
22	Կնիք	հատ	1		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբաց համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 26-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱԲԱՑԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 28-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18--րդ կետի , «Տեղական տուրքերի և վճարների մաին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածների, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով՝

համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքի վարչական տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանել համաձայն հավելվածի:
2.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքի վարչական տարածքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 23-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին»թիվ 28-Ն որոշումը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թվականի հունվարի 1-ից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԹՈՒՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

2. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

3. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՈՎՍԵՓ

4. ՄՍՐՅԱՆ ԳՆԵԼ

5. ՌՈՍՏՈՄՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆԻԿ ՎԱՆԵՑՅԱՆ

24 նոյեմբերի 2016թվական
գ. Այգաբաց

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԱԲԱՑԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24 - Ի ԹԻՎ 26 -Ն ՈՐՈՇՄԱՆ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է երկու հազար հինգ հարյուր դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ.

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար դրամ.

գ.51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ.

դ.101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝քսան հազար դրամ.

ե.201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար դրամ.

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութսուն հազար դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ.

բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար դրամ.

գ.51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ.

դ.101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝քսան հազար դրամ.

ե.201—ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար դրամ.

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութսուն հազար դրամ.

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար՝ երեք հարյուր հիսուն դրամ

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հիսուն հազար դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար հինգ հազար դրամ.

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ.

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար դրամ.

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ.

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ.

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քառասուն հազար դրամ.

5) ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար մեկ հազար դրամ.

բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ.

գ.51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ.

դ.101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ.

ե.201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ.

զ.501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝քսանհինգ հազար դրամ:

6. Համայնքի սեփականությունը հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանելու համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ երեք հարյուր դրամ .

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ .

3) մեկ շաբաթվա համար՝ հինգ հազար դրամ .

4) մեկ ամսվա համար՝ քսանհինգ հազար դրամ .

5) մեկ տարվա համար՝ մեկ հարյուր հազար դրամ :

7. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ հիսուն հազար դրամ:

8. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

4)սոցիալական գովազդի համար՝

10. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 տոկոսի չափով.

11.Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը,ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի տաս տոկոսը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

12. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հինգ հազար դրամ:

13. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է յոթանասուն հազար դրամ:

14. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հինգ հազար դրամ:

15.Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և /կամ/ մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հիսուն հազար դրամ:

16. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝

1) 3հեկտարից մինչև 5 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ.

2) 5հեկտարից մինչև 7 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ.

3) 7հեկտարից մինչև 10հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար յոթ միլիոն դրամ.

4) 10հեկտարից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տաս միլիոն դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ հինգ հազար դրամ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ հինգ հազար դրամ:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ հինգ հարյուր դրամ:

4. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճարը սահմանվում է

1) կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող եւ (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական երեք հարյուր դրամ, կամ

2) ոչ կենցաղային և խոշոր եզրափակիչ աղբի հավաքման և փոխադրման համար՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ հինգ հարյուր դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. Վանեցյան